02/20/06 - «Դիզայն» մասնագիտության դիմորդների համար
«**ԿՈՄՊՈԶԻՑԻԱ**» քննական առարկայի առաջադրանքի

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Քննական առաջադրանք - երկրաչափական մարմինների կառուցմամբ և կիրառմամբ ստեղծել համակցված ծավալատարածական կոմպոզիցիա՝ նկարչական հեռանկարի սկզբունքով և լուսաստվերային մշակմամբ:
Վիճակահանության սկզբունքով թվով 10 (տաս) երկրաչափական մարմիններից
/***խորանարդ, գլան, գունդ, կոն, քառանկյուն բուրգ, վեցանկյուն պրիզմա, ուղղանկյուն պրիզմա, սալիկ՝քառանկյուն, սալիկ՝ վեցանկյուն, տափօղակ,***/,
ընտրվում է 5 (հինգ) երկրաչափական մարմին:

Նյութ - աշխատանքը կատարվում է A3 ձևաչափի գծագրական թղթի վրա (վատման)՝ գրաֆիտե սև մատիտով:
Թույլատրվում է գծագրական գործիքների կիրառումը:

Նպատակ - ստուգել և գնահատել դիմորդի ստեղծագործական ունակությունները՝ կոմպոզիցիոն մտահղացման, երկրաչափական մարմինների համակցմամբ ծավալատարածական և հեռանկարային ընկալման կարողությունները, գրաֆիկական միջոցներով այն ներկայացնելու հմտությունը:

Քննական խնդիրներ և պահանջներ -

- Թղթի վրա գրագետ տեղադրում՝ հաշվի առնելով տեղադրվող պատկերի համաչափությունները:
- Ապահովել երկրաչափական մարմինների գրագետ կառուցումը և կոմպոզիցիայի մշակումը՝ կիրառելով նկարչական հեռանկարի սկզբունքը:
- A3 ձևաչափի թղթի վրա պահպանել տարբեր մարմինների համատեղ կիրառման օրինաչափությունները՝ ապավովելով համակցման և ընկալման հնարավորությունները:

- Կատարել առաջադրանքի լուսաստվերային մշակում՝ գծանկարի շտրիխային տեխնիկայով:
- Պայմանական լույսի աղբյուրը ընտրվում է ինքնուրույն /կամայական/:
- Աշխատանքում կիրառել վերադրման և մեկ մարմինը մյուսով հատման սկզբունքը:
- Ծավալային կոմպոզիցիայի դիտման կետն ընտրվում է հեղինակի հայեցողությամբ:
- Վիճակահանության սկզբունքով ընտրված թվով 5 (հինգ) երկրաչափական մարմինները կոմպոզիցիոն առաջարկում պարտադիր է կիրառել յուրաքանչյուրը 2 և ավել անգամ:
- Համակցված երկրաչափական մարմինները ենթարկել ձևաստեղծման ռելիեֆային փոփոխությունների մասնատման և հանման մեթոդներով:

Աշխատանքի կատարման համար տրվում է **4 ժամ (240 րոպե)**՝ առանց ընդմիջման:

Աշխատանքի գնահատման համար կարևորվում է ներկայացված պահանջների ապահովումը:

Նախապես ծածկագրված քննական աշխատանքը ստուգվում և գնահատվում է քննական հանձնաժողովի բոլոր անդամների կողմից անհատապես, այնուհետև ստացված գումարային միավորը միջինացվում է 20.00 (քսան) միավորի սահմանում: Դրական են համարվում 08.00 (ութ) և բարձր միավորները (համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 7-ի № 476-ի որոշման), գնահատման միավորները նշանակվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ:

Քննական աշխատանքի գնահատման չափանիշներ

№	Հիմնական չափանիշներ	№	Պարամետրեր	Միավորներ	
1.	**Կոմպոզիցիոն լուծում**	1	Տրված ձևաչափում պատկերի գրագետ տեղադրում	5	20
		2	Կոմպոզիցիոն լուծման ամբողջականության ապահովում		
		3	Կոմպոզիցիոն մտահղացման ինքնատիպություն և կերպարայնություն		
		4.	Վերադրման և մեկ մարմինը մյուսով հատման սկզբունքի կիրառում և ռելիեֆային փոփոխում		
2.	**Կառուցում**	1.	Օգտագործվող երկրաչափական մարմինների գրագետ կառուցում՝ համակցման, հանման և մասնատման մեթոդով	5	
		2.	Նկարչական հեռանկարի պահանջների պահպանում և երկրաչափական մարմինների փոխկապակցում տարածության մեջ		
		3.	Երկրաչափական մարմինների ծավալային արտահայտում՝ լուսաստվերային հակադրության միջոցով		
		4.	Կոմպոզիցիոն էլեմենտների համակցման մասշտաբային ընկալում		
3.	**Կատարողական հմտություններ**	1.	Լուսաստվերային մշակում	5	
		2.	Նկարչական հեռանկարի հմտության տիրապետում		
		3.	Երկրաչափական մարմնի ծավալի արտահայտումը գծանկարի շտրիխային տեխնիկայով		
		4.	Երկրաչափական մարմինների նկարչական կառուցման գծային թույլ արտահայտում		
4.	**Աշխատանքի ամփոփում**	1.	Աշխատանքի արտահայտչականություն և ամբողջականություն	5	
		2.	Գրաֆիկական տեխնիկայի հմտություն		
		3.	Աշխատանքի ավարտվածություն և մատուցում		
		4.	Առաջադրանքի կատարման քննական պահանջների ապահովում		